ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

<u>ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ</u>

ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ԼՕ-2021/61, 09.07.2021թ.

Բողոք բերող անձ՝ «Հարսնաձոր» ՍՊԸ

Պատվիրատու՝ Արարատի քաղաքային համայնքապետարան

Գնման ընթացակարգի ծածկագիրը՝ «ՀՀ ԱՄԱՔ-ԲՄԱՇՁԲ-21/03» բաց մրցույթ

Գնման առարկան՝ Արարատի քաղաքային զբոսայգու կապիտալ վերակառուցման աշխատանքների ձեռքբերում

Բողոքի պահանջը՝ պարտավորեցնել Արարատի քաղաքային այգու կապիտալ վերակառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ՍՄԱՔ-ԲՄԱՇՁԲ-21/03» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին դադարեցնելու «Հարսնաձոր» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը::

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Լ. ՕՀԱՆՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Լ. ԱՆԱՆԻԿՅԱՆ

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

- 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ

որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,

- 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

ՀՀ գնումներիհետկապվածբողոքներքննողանձին

Բողոքբերող՝«ՀԱՐՄՆԱԶՈՐ» ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Չարենցի 1, 314 սենյակ
Հեռ: +(374 91) 210706
Էլ.փոստ՝ harsnadzor@yandex.ru

Պատվիրատու՝ *Արարատի քաղաքային համայնքապետարան*
Հասցե՝ՀՀ, Արարատի մարզ, Արարատ համայնք
Ք. Արարատ Շահումյան 34

Գնմանընթացակարգիծածկագիրընառարկան՝
Արարատի քաղաքային զբոսայգու կապիտալ վերակառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ԱՄԱՔ-ԲՄԱՇՁԲ-21/03» ծածկագրով բաց մրցույթ

ԲՈՂՈՔ

- ***<u>Գործի հակիրճ նկարագրությունը և բողոքի փաստերը.</u>***

Արարատի քաղաքային զբոսայգու կապիտալ վերակառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ԱՄԱՔ-ԲՄԱՇՁԲ-21/03» ծածկագրով բաց մրցույթ (այսուհետևան՝Ընթացակարգ):

Հայտերի բացման վերջնաժամկետ է սահմանվել **28.06.2021թ.:**

Սույն Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ՀԱՐՄՆԱԶՈՐ» ՍՊԸ-ն և գնային առաջարկով ներկայացրած գների հաշվարկի արդյունքում ճանաչվել առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալու հաջորդող աշխատանքային օրը՝ **29.06.2021թ.**, «ՀԱՐՄՆԱԶՈՐ» ՍՊԸ-ն հայտի ապահովման բնօրինակը ներկայացրել է Պատվիրատուին՝ ներկայացնելով նաև կից ուղեկցական գրությունը /պատճենը կցվում է/:Վերոհիշյալ ուղեկցական գրության վրա առկա է Արարատի համայնքապետարանի մտից կնիքը և ամսաթիվ՝ 29.06.2021թ.:

Այնուհետև 02.07.2021թ. www.gnumner.am համացանցային կայքում հրապարակված տեղեկատվության համաձայն՝ հրապարակվել է «ՀՀ ԱՄԱՔ-ԲՄԱՇՁԲ-21/03» ծածկագրով բաց մրցույթի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն, որտեղից տեղեկացել ենք, որ «ՀԱՐՄՆԱԶՈՐ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է այն հիմքով, թե իբրև

«ՀԱՐՄՆԱՁՈՐ» ՍՊԸ-ն հայտի ապահովման բնօրինակը ներկայացրել է սահմանված կարգի խախտումով /հայտարարությունը կցվում է/:

- ***Բողոքի իրավական հիմքերը և հիմնավորումները.***

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի ***միասնական կանոններով*** մրցակցային, թափանցիկ, ***համաչափ***, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով ***մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում***:

Հրավերի 4-րդ կետով սահմանված է, որ եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա գնման ընթացակարգ ն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը՝ պայմանով, որ մասնակիցը դրա բնօրինակը գնահատող հանձնաժողովին ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ:

Ստացվում մի իրավիճակ, որ «ՀԱՐՄՆԱՁՈՐ» ՍՊԸ-ն հայտի ապահովման բնօրինակը սահմանված ժամկետում ներկայացրել է Պատվիրատուին՝ ունենալով ապացույց ուղեկցական գրության պատճենը՝ նշվածմտիցկնիքով, սակայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից անհասկանալի որոշումներ են կայացվել, մասնավորապես, ինչպես հետագայում է պարզվել 02.07.2021թ. gnumner.am համացանցային կայքում հրապարակվել է «ՀՀ ԱՄԱՔ-ԲՄԱՇՁԲ-21/03» ծածկագրով բաց մրցույթի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն, որտեղ նշված է եղել, որ «ՀԱՐՄՆԱՁՈՐ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է այն հիմքով, թե ՍՊԸ-ն հայտի ապահովման բնօրինակը ներկայացրել է սահմանված կարգի խախտումով:

Վերը նշված փաստի առթիվ առկա չէ որևէ արձանագրություն, որևէ նամակ կամ հրավերի պահանջների խախտման վերաբերյալ որևէ ծանուցում, այլ ընդամենը առկա է հրավերի պահանջներին համապատասխանող հայտի փաթեթ, սահմանված ժամկետում Պատվիրատուին ներկայացված բանկային երաշխիքի բնօրինակ և որ մեր կարծիքով ամենակարևորն է **16.000.000** ՀՀ դրամ ցածր ներկայացված գնային առաջարկ:

Բացի այդ, բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ գնահատող հանձնաժողովը հայտը մերժելու մասին որոշմամբ չի արձանագրել որևէ մանրամասնություն, թեինչով է «ՀԱՐՄՆԱՁՈՐ» ՍՊԸ-ն հայտի ապահովման բնօրինակը

ներկայացրել է սահմանված կարգի խախտումով՝ հիմք տալով միայն կատարել ինչ-որ եթանդրություններ հայտը մերժելու պատճառների մասին:

Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները, ապա բողոքը ներկայացվում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը:

Նույն հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» պարբերության համաձայն՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձն իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման:

Ղեկավարվելով Օրենքի ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի և 7-րդ մասի 1-ին կետի <<բ>> պարբերության պահանջներով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին

ԽՆԴՐՈՒՄ ԵՄ՝

Պարտավորեցնել Արարատի քաղաքային այգու կապիտալ վերակառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ԱՄԱՔ-ԲՄԱՇՁԲ-21/03» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին դադարեցնելու «ՀԱՐՄՆԱՁՈՐ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

Առդիր՝ 7 թերթ:

Հարգանքով՝

«ՀԱՐՄՆԱՁՈՐ» ՍՊԸ-ի տնօրեն՝ _____

07.07.2021թ.